

ՕՐԱԳԻՐ

10 ՓՐԵ.



10 ՓՐԵ.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՂԳԱՅԻՆ ԵՐ ԱՌԵՐՏԻՔԱՅԻՆ

Ե. ՏԱՐԻ 1290 ՐԱՄԱԶԱՆ 23

ՀՐԵՂՆԱԲԹԻ 1 ՆՈՅՄԲԵՐ 1873

Ն. Տ. ՆՈՅՄԲԵՐ 13 ԹԻԻ 1080

Ա. Ղ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Կրօնն թէ Սահմանադրութեան մէջ Պատրիարքը դատաստանի քաջելու յօդուած չը կայ, զարմանալի կուրութիւն:

Սահմանադրութեան 6րդ յօդուածը բացարձակ կերպով կրօն թէ՛

«Պատրիարքի վրայ ամբաստանութիւն և բողոք ընդհ. ժողովը և կրօնական ու ֆաղաքական ժողովներն ընելու իրաւունք ունին:

«Ընդհ. ժողովը իր մէջէն հինգ եկեղեցական և հինգ աշխարհական ընտրելով 10 հոգիէ բաղկացեալ ֆինիչ յանձնաժողով մը կը կարգէ. բայց պէտք է որ այս քննիչներուն մէջ ամբաստանող կամ բողոքող անձանց մտաւոր չը գտնուի: ֆինիչ յանձնաժողովը եղած ամբաստանութիւնները քննելէն վերջը՝ տեղեկագիր կուտայ ընդհ. ժողովոյն, որ կորոչէ զխնդիրը գաղտնի քուէարկութեամբ:

Կարգանք նաև 87րդ յօդուածը՝ որ կրօն:

«Խնդիր մը լաւ մը քննուելէն և անոր վրայ ներկայ ժողովականաց կարծիքը հասկցուելէն վերջը քուէի կը դրուի:

Ուրեմն ընդհ. ժողովը այդ ֆինիչ յանձնաժողովոյ տեղեկագիրը լաւ մը քննելէն և անոր վրայ երեսփոխանաց կարծիքը հասկցուելէն վերջը՝ զայդ տեղեկագիրը գաղտնի քուէի պիտի դնէ և ոչ թէ մեքենայէս՝ տեղեկագիրն առնելուն պէս առանց վիճարանելու քուէի դնէ:

Արդ կրնուինք թէ՛ Պատրիարքը կրնայ ամբաստանուիլ, կրնուինք թէ Պատրիարքի դէմ կրնայ բողոքուիլ և կրնուինք թէ՛ այդ ամբաստանութիւնն ու բողոքը կրնայ քննուիլ ոչ-բողոքող անձանց ձեռք. լաւ ուրեմն, ասկէ անմիջապէս ետքը եկած գործողութեան, որ ընդհ. ժողովը պիտի ընէ, ինչ անուն կուտայ:

Մեք դատաստան և վճիռ անուը տուինք ասոր, դուք ձեր ուզած անունը յայտնեցէք նայինք, որպէս զի եթէ ձեր յայտնած անունը՝ մեր դատած անունէն աւելի յարմարաւոր է՝ զայն գործածենք, վասն զի մեք բաւերու սիրահար չենք. մեք գործողութեան սիրահար ենք. ինչորոյ մը վրայ ամբաստանող և ամբաստանեալ, բողոքող ու բողոքեալ գտնուելուն, չէզոք անձանց ձեռք ատոր վրայ քննութիւն ըլլալուն և ատոր տեղեկագիրը (մազպաթան) ընդհ. ժողովոյն վիճարանութեան ներկայացուելէն վերջը՝ գաղտնի քուէարկութեամբ վճուուելուն ամբողջական անունը՝ ամբաստան է:

Եթէ դատաստան չէ ըսող մը կոյ՛ թող երեան գայ:

Մեր ուզածը Սահմ. 6րդ յօդուածին գործողութիւնն է, որու հաւաքական անունը դատաստան է. եթէ այս բառը ծանր կը թուի ձեզ, բառը փոխեցէք դուք ձեզ համար. մեք միշտ մեր մէջը դատաստան կրօնք, զի աշխարհի ընդունած բառն այդ է, ու ձեռնէ կը պահանջենք ծրր յօդուածին գործողութիւնը՝ որ ձեր իսկ պահանջումը պէտք է ըլլայ:

Դուք իմաստակութեան մ'ալ կը զիջանիք գիտութեամբ՝ ու կրսէք թէ Սահմանադրութեան մէջ դատաստան կամ դատել բառն անգամ չի կայ, և թէ 6րդ յօդուածին զօրութիւնը շատ շատ Պատրիարքին հրաժարումը վճուել է և թէ Պատրիարքն արդէն հրաժարեալ ըլլալով՝ այդ յօդուածին զօրութիւնը սպառած է:

Նայինք այդպէս է:

Սահմանադրութիւն յօդ. 67.

«Ընտրելու և ընտրուելու (Սահմ. յօդ. 68) իրաւունքէն ամբաստանողն զրկեալ են՝

«Ազգային գործոց մատակարարութեանը մէջ նենգութեամբ բռնուած և ազգային ժողովներէն մէկուն կողմէն ամբաստանած անձինք, որոց համար ազգային գործերու մէջ չը գոր-

ծածուիլը վճարած ըլլայ ամբողջ ժողովին կողմէն:

Արդ չը կրնա՛ր ըլլալ որ ազգային գործոց մատակարարութեան մէջ նենգութիւն (կիչ) ընէ Պատրիարք մը:

Միթէ Երուսաղէմ քաջուած հեռագրի ամբաստանութեանէն եթէ չը կրնայ արդարանալ Պատրիարքը, բրածը ազգային գործոց մատակարարութեան մէջ նենգութիւն չը պիտի՛ սեպուի, (չը մտնանք յիշել թէ՛ խօսքերնիս են. թաղրական է. եթէ չը կարենալ արդարանալուն վրայ է, և Աստուած տայ որ արդարանայ):

Միթէ ազգային ժողովներուն առանց գիտակցութեանը՝ վանայ Պողոս վարդապետն, թերևս արդար ոմն, աքսոր զրկելու ամբաստանութեանէն եթէ չը կարենայ արդարանալ Պատրիարքը, բրածն ազգային գործոց մատակարարութեան մէջ նենգութիւն չը պիտի՛ սեպուի:

Միթէ առանց ժողովոյ գիտակցութեան և առնելիք ունենալը չը հաստատուած, Երուսաղէմայ մուքաթայէն և ուրիշ հաշիւներէն իւր վրայ անցուցած 120 հազար զ՛. ի ամբաստանութեանէն եթէ չը կարենայ արդարանալ, բրածը նենգութիւն չը պիտի՛ սեպուի:

Թող այս Պատրիարքը:

Միթէ կարելի չէ՞ որ Պատրիարք մը գտնուի գաղտնապէս թերայի գերեզմանատունը ծախող և ստակները կլլող:

Միթէ կարելի չէ՞ որ Պատրիարք մը գտնուի ազգին բարոյական իրաւունքները դրամով և այլ խուստամբ վաճառող:

Միթէ կարելի չէ՞ որ գտնուի Պատրիարք մը գաղտնապէս գաթօլիկութիւնն ընդունող և Պապին գլխաւորութեանը ստորագրութիւն տուող մէկ քանի գանձու փոխարինութեամբ:

Վերջապէս՝ ինչպէս կրնաք համարձակել ըսելու թէ՛ Պատրիարքը անդատելի մարմին մ'է՛ ազգին մէջ, մինչդեռ այսպիսի սկզբունք մը ընդունելը՝ ըսել է Պատրիարք գտնուելիք անձանց թէ՛ ըրէք ինչ որ կրնաք, ծախեցէք՝ որչափ

կրնաք, յամիշտակեցէք, բանագրեցէք, աքտորեցէք և պատրիարքութենէ միայն հրաժարական տալով ազատ հրատարակուեցէք :

Ո՛չ, ո՛չ, այսպիսի սկզբունք մը և ոչ մէկ Հայ, և ոչ մէկ մարդ կրնայ ընդունիլ :

Պատրիարքը երբ ամբաստանեալ է՝ պիտի դատուի ընդէն ժողովոյ կողմէն, և եթէ հրաժարելը վճռուի հրաժարականը՝ պիտի առնուի, իսկ եթէ հրաժարականը վճռուիլը բաւական չըլլալով ուրիշ պատիժ վճռուի ըստ բնութեան յանցանաց՝ այն ալ պիտի դործադրուի :

Հաւ ուշադրութիւն ըրէք Սահմանադրութեան 6րդ յօդուածին՝ եթէ հրաժարականը վճռուի ըսելով անցնելուն և հրաժարականի վճիռը բաւական չը սեպուած յանցանաց համար՝ զընդէն ժողովն ըստ պարագային ազատ թողուին :

Ի զո՛ւր կը պուռաք կը պուռտէք թէ Պատրիարք հրաժարական տալովը՝ այլ ևս ասոր ամբաստանութիւն կամ դատի ներքեւ նկատելու տեղի չ'է մնացած :

Պատրիարքի մը վարչական ընթացքին դէմ քանի որ գանգատներ կան ու կը կենան, ատենք Պատրիարքին հրաժարմամբ չեն կրնար անհետ ըլլալ, այլ ատենք ՚ի հարկէ և ստիպողապէս քննուելով պիտի ստուգուին, և եթէ դժբաղդաբար իրօք պատժապարտ կացնեն զամբաստանեալը՝ ընդէն ժողովն ինքը դորա անկումը և այլ հարկ եղած պատիժը պիտի հրատարակէ, յանցապարտին հրաժարեալ վիճակն առանց նկատողութեան առնելու :

Այս է օրինաց ոգին, և այս է սահմանադրականութեան սկզբունքը :

ԱՌ ԱՆՑ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅ
ԱԶԳԵՅԻՆ ՏԱԳՆԱՊԸ ՉԵՆՔ ԿՐՆԱՐ
ԱՆՑՈՒՆԵԼ

Ազգի մը կամ ժողովրդեան պատինն ու կեանքը, բարոյական և յառաջադիմական ուժը, ներկայ ապագայ երջանկութիւնն ու թշուառութիւնը՝ օրինաց հետ բնական և ներգաշնակ կապակցութիւն մ'ունին : Եթէ օրէնքը չ'իշխէ, եթէ յանցաւորը չը դատէ ու չպատժէ և անմեղն անվարձ թողու, ամեն անկարգութիւն, ամեն զեղծում կը տիրեն ազգին մէջ :

Կիրքը, շահասիրութիւնը, փառասիրութիւնը, խաբէութիւնը և ամեն մոլութիւնք ձեռք ձեռքի տուած ամեն չարիք կը գործեն, ամեն խարդաւանք կը ՚իւթեն, մինչև որ այն երկրին կամ ազգին կորուստը փութացընեն : Այսպիսի անհանդուրժելի վիճակի մը մէջ անձնական պատիւները կասկածի տակ կը մնան, ընկերական վըստահութիւն, բարեկարգութիւն և սէր

կը վերնան. բարոյական և ՚իւթական յարաբերութիւնք կը վտանգին ու կը խախտին, մարդկային կեանքն ու ըստացուածներն տպահովութիւն չեն գտներ, միով բանիւ ոչ ոք կրնայ երաշխաւորել մինչև իսկ իւր անձին :

Յաւ ՚ի սիրտ կը տեսնենք որ մեր ազգն այսօր այս կերպ ողբալի դրից և կացութեան մէջ ինկած է քանի մը խռովայող անձանց երեսէն, և եթէ այս անիշխանական դրութիւնը քիչ մ'ալ տեւէ, բարբարոսութեան դարերուն ըզմեզ պիտի մօտեցնէ . . . :

Ներկայ ազգային տագնապն ալեւժբիեալ ծով մը չէ որ Յոնիանով մը հանդարտի և խաղաղի. մասնաւոր բազին մը չէ որ ուխտ մը կամ զոհ մը բաւ համարի, այլ այս տագնապը օրէնք կը պահանջէ, որ անաչառ դատաստանաւ իւր դատակնիքը տայ անոնց՝ որ ազգն այս խառնաշփոթ վիճակին մէջ ձգեցին : Այո, օրէնք և դատաստան . . . ատենք միայն կրնան ազգին խաղաղութիւնն ու ապահովութիւնը նընթերաշխաւորել և անոր պատիւն իրեն վերադարձնել :

Ամենքնիս համոզուած ենք որ ազգային այս տխուր տագնապին թուականն յուլիս 31էն կ'սկսի, ուստի փափաքելի է մեզ և համայն անկեղծ և ճշմարիտ Հայոց՝ որ օրէնքն իր քննութեան և դատաստանին յառաջաբանն անկէց սկսի, գտնայ այն ցաւալի դէպքին չարանիւթ հեղինակներն և ըստ օրինի պատժէ ՚ի խրատ և ՚ի զգուշութիւն այլոց : Այս քննութիւնը խիստ կարևոր է մանաւանդ անոր համար որ կասկածը պաշտօնական անձանց վրայ է : Եթէ իրօք պաշտօնական անձինք են այդ դատապարտելի գործին հեղինակները, և անպատիժ մնան, ազգայինք ինչ ապահովութեամբ այսուհետեւ կրնան երեսնց գործին համար Պատրիարքօրան ոտք կոխել, իսկ եթէ անպաշտօն անձինք էին և անպատիժ մընան, այսուհետեւ ո՞վ կը վստահի ազգային պաշտօն վարել, քանի որ իր պատիւնն ու անձն օրինաւոր երաշխաւորութեան տակ չգտներ :

Յուլիս 31էն մինչև ցայսօր ալ ինչ դէպքեր որ տեղի ունեցան, իրենց բոլոր մանրամասն պարագաներովը պէտք է անաչառ քննութեան և դատաստանի ենթարկին : Ազգը պէտք է պահանջէ այս կարևոր դատաստանն ու քննութիւնը, և իր դատին իբրև առաջարկութիւն՝ բովանդակ զօրութեամբ անոր կըթնելու է, վասն զի Ազգային պատիւնն ու Պատրիարքութիւնն այսօր այն դէպքերուն պատճառաւ հարուածոց ենթակայ եղած են : մինչև որ այն դէպքերը դատողական բովէն չանցնին, ըստ մեզ անկարելի է այս տագնապէն դուրս ելնել, կամ լաւ ևս է ըսել տագնապն աւելի չը ծանրացնել :

ՄԱՍԻՍ
վերողբեալ յօդուածը կ'ստորագրեն նաև՝ թ. Պէկեան, Մ. Այվատեան :

Ք. Ղազարոսեան, Ս. Փափաղեան, Յ. Արշակ, Պ. Ժամակոչեան Օ. Խօճասարեան և վերջապէս ձախակողմեան բոլոր երեսփոխանք. և կաղաչեն ատենց ամենքը՝ որ Մասիս յետոյ իւր այս ըստօրագրութիւնը չը լզէ, նամանաւանդ հսկէ իւր օգնական խմբագիր Տ. Մանավեանին վրայ, որ ասոր դէմ իբրև խմբագրական անստորագիր խայտառակ յօդուածներ չը գետեղէ Մասիսի մէջ : Որպէս զի սա տագնապալից վիճակէն դուրս ելնէ ազգը երկու կուսակցութեանց ազգասիրաբար համաձայնութեամբ :

Ոմանք կը հարցնեն թէ պատրիարքարանի դիւանատունը որոցմէ՞ կը բաղկանայ, ասաւասիկ անուններ :

Թովմաս Էֆէնտի՝ դիւանապետ և Խառն ժողովոյ դիւանադպիր :

Կարապետ Էֆ. Խաչատուրեան Տաճկերէն գրութեանց դիւանադպիր :

Բարթող Էֆ. Թէլեան՝ Տնտեսական և Ելեմտական խորհրդոց դիւանադպիր :

Գալուստ Էֆ. Տէր Պօղոսեան՝ դատաստանական խորհրդոյ դիւանադպիր :

Սեպուհ Էֆ. Բլատեան՝ աղգահամարի և արձագրատան դիւանադպիր :

Յովհաննէս Էֆ. Թուղաճեան՝ Ուսումնական խորհրդոյ դիւանադպիր :

Ահա ատենք են դիւանատունը ըստ օրինի կազմող, ըստ Թովմաս Էֆէնտիի ստորագրեալ յայտարարութեան՝ խառն ժողովոյ վաւերացուցած Գէօթահեայի երեսփոխանական ժողովը լուծողը :

ՏՕՊՐԱԿԸ ՊԱՏՈՒՆԵՑԱԻ
. . . . Խմբագիր

Կը լսենք թէ թաղիս եռանդամ թաղ. խորհրդոյ կրկնակի ամբաստանեալ Ատենապետին ազգականներէն մի քանին անճոռնի նամակ մ'ի ձեռին ապկէ անկէ ստորագրութիւն ճորալու ելեր են, առանց գիտնալու որ իրենց այդ բրածը (եթէ մէկ քանի պարզամիտներ յաջողին որաւ) ամէն օրէնքի հակառակ է, որովհետև Հ. Էֆէնտի Մագպուլեան՝ իբր ամբաստանող՝ ՚ի վաղուց դատաստանի սկզբունքն ընդունած և առ այդ հրապարակաւ հրաւեր կարդացած է ընտրողական ժողովոյնախագահ Ս. Հօր, որայ պարտքն և պէտք եղեծը տնօրինել անյապաղ, որպէս զի եթէ անպատեհութիւն մ'իսկ ծագի իւր վրայ չծանրանայ ամբողջ պատասխանատուութիւնը :

Մեր ըսելիքը այդպիսի նամակ մը հրապարակի վրայ տեսնուելէն վերջը : 27 հօկտ. 1873

Եէնի-Գափու Թաղեցի ոմն

ՆԵՐՔԻՆ

Կայսերական հրամանաւ

Պատերազմական գործոց բարձրագոյն ժողովոյ անդամ ճէմիլ բաշա Պետական խորհրդոյ անդամ անուանեցաւ :

— Սերվիոյ Միլան իշխանը գարնան թողեր է Կ. Պօլիս գալը Վեհ. Սուլթանին այցելութիւն տալու համար :

— Կ. Պօլսոյ Անգղիական դեսպան Սըր Հէնրի Իլեթթ սոյն ամսոյն մէջ Լոնտրա պիտի ուղևորի :

— Բերայի մէջ ջրոյ նուազութեան պատճառաւ, մէկ խրայոյ ջուրը 2 ղշ. է և Բանլը-Քալաքի ջուրին տակառն ալ 12 ղշ. ծախուիլ սկսեր է :

— Բերայի Միւնիսթրալիթէի պաշտօնատան ետեւի կողմը ատենէ մ'ի վեր բացուելու վրայ եղած խորունկ խրամի մը մէկ կողման պարապ մնացած դետինը երեկ առաւօտ փլելով, երեք գործաւոր առաւ հետը վար իջուց, որոցմէ մէկուն ողնայատ ոսկորը կոտրելով ան միջպէս մեռաւ միւս երկուքն ալ ծանրապէս վիրաւորուած են :

— Իզմիրի շրջակաները նորէն հուղ կահարաց խումբ մը, Էմին անուն աւագակատի մը առաջնորդութեան տակ, երեսունէն աւելի ճանրորդներ կողոպտեր են :

— Դամասկոսի մէջ Ապտալա անուն մէկը Անգղիոյ փոխ-հիւպատոսին գա վազներէն մին թշնամութեան մը պատճառաւ ատրճանակով մը սպաններ է :

— Քեամիլ բաշա, որոյ աւողջական վիճակը երթալով բարւոքելու վըրայ է, անցեալ շաբթու Բարիզէն 100 հազար ֆրանք արժողութեամբ ոսկիէ գոհարազարդ ժամացոյց մը բերել տրւեր է, Վեհ. Սուլթանին ընծայ տալու համար :

— Հեռագրաց նորընտիր վերատեսուչ Սալիմ պէյ խիստ և ազդու միջոցներ ձեռք առեր է, ևրոպական հըրապարակներէն հասած դրամական լուրերը՝ գործակալաց միջոցաւ դուրս ու է մէկուն հաղորդուիլը բացարձակապէս արգիլելու համար : Հեռագրական գործակալներէն ոմանք թերևս խնդան ձեռք առնուած այս միջոցներուն վրայ, սակայն խնդարին փորձերին պիտի մընայ կարծեմք շնորհիւ նորընտիր վերատեսչին աշաւորջ փութաջանութեանը, որ հեռագրական ամեն ու է զեղծում բառնալով անհետ ընելու կարողութիւն և կամք կ'արտայայտէ :

— Իզմիտէն եկած նամակ մը կը ծանուցանէ թէ անցեալ շաբթ օր Կէյլէյի բօսթայի ճանբուն վրայ աւագակները յոյն սեղանաւորի մը վրայ յարձակելով, վրան ունեցած բոլոր

գոյքը կողոպտելէն յետոյ զինքն ալ զարկեր սպաններ են :

— Այս շաբթ օր ալ Պէշիքթաշի մէջ մարդուն մէկը բախտէ մը զարնելով կ'սպաննէ, և ինքը խոյս կուտայ, սակայն անմիջապէս զապթիէներ իյնալով ետեւէն զինքն հայածելու, չարագործը զապթիէներուն ձեռքն ինկած միջոցին կը քաշէ դանակը, և ինքզինքըն ալ զարնելով կ'սպաննէ :

— Ոստիկանութիւնն անցեալ շաբթու Ղալաթիոյ մէջ վեց տուն կոխելով գոցել տուեր է, Այս տուները, որք պատուաւոր տան մը կերպարանք ունալով իրր թէ կահաւորեալ պանդոկներ ըլլալ կը կեղծէին, մտնողը հետեւալ առաւօտուն մերկ և ընչազուրկ դուրս կ'ելնէր վրան գտնուած ստակը, ժամացոյցը ևայլն հոն գիշերը կողոպտուելով, ինչպէս յափշտակուին առանց իմանալու : Ոստիկանութիւնը այդ տուները կոխելով հետազոտութեան ու խուզարկութեան մը կ'սկսի, որոյ շնորհիւ կը տեսնէ որ ամեն մէկ պառկելու յատկացեալ սենեակներուն զգեստդընելու կամ կախելու յատկացեալ տեղւոյն մօտ մէկ մէկ փոքր ծակեր բացեր են, ուրկէ գիշերանց թեքերին ներս խօթելով կախուած կամ գրուած ըզգեստուց գրպանը կը խուզարկեն և ձեռքերնուն ինկած նիւթը կը յափըշտակեն եզեր : Այս տուները գոցելէն յետոյ, տան տէրերն ալ որոնց ամենքըն ալ Հրեայ են, ձերբակալելով կը բանտարկէ ոստիկանութիւնը :

— Երկուշաբթի առաւօտեան մառախուղին շոգեհանաներէն շատը ճանբան մարտերու երկիւղիւ նաւամատոյցները կեցեր են մէգին փարատելուն ըսպասելով, սակայն Շիրքէթի 30 թիւ շոգեհանը Արնավուտքէոյէն մեկնելով Օրթաքէոյ և Պէշիքթաշ հանգիպելէն վերջը դէպ 'ի կամուրջ ճանբայ կ'ելնէ, և ժամ մը ծովուն վրայ թափառելէն վերջը ինքզինքը Օրթաքիւղի առաջը կը գտնէ, ուրկէ կամաց կամաց նորէն Պէշիքթաշ երթալով իւր ճանրորդներն ալ բոլորը հոն կը հանէ :

Նմանապէս Շիրքէթի մէկ ուրիշ շոգեհան մ'ալ Օրթաքէոյի առաջը նաւակ մը կ'ընկղմէ, որուն մէջ գտնուող երեք անձինքն ալ, անմիջապէս հասած օգնութեանց հակառակ, անհետ ըլլալով կը խղզուին :

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱՒՍՏՐԻԱ—ՀՈՒՆԳԱՐԻԱ

Վիէննա 11 նոյեմ.

Դրամական կացութեան տագնապին առաջըն առնելու նպատակաւ ըլլալիք անօրէնութեանց վերաբերեալ օրինաց ծրագիրը կառավարութեան կողմանէ խորհրդարանին ներկայացաւ, որն որ 80

միլիոն ֆիորինի փոխառութիւն մը կ'առաջարկէ :

Սոյն ծրագիրը ջատագովելու նպատակաւ պաշտօնէին ըրած ատենախօսութիւնը ցուրտ կերպով ընդունուեցաւ :

ԴՐԱՄԱԿԱՆ

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂՐՈՑ

Ղալաթիա 31 հոկտ.	
Ընդհ. Պարտ. Արժ. բաց . . .	51 . 24
գոց . . .	50 . 24
բարձր գին . . .	51 . 25
ցած . . .	50 . 14
Բումէլի Արժ. Տր.	
Նոր . . .	
ֆոխաւ . 69ի	328
" 65ի	332
" 63	328
Սօսիէթէ Ժէնէրալ Լ. Ս.	8 . 40
Քրէտի Օսթ-թիւրք . . .	3 .
Գանձատոմս 1872ի . . .	79
Սօսիէթէ Օթօման . . .	4 . 48
Պանք տը ֆօնսթ. . . .	4 . 35
Քրէտի Ժէնէրալ Լ. Օ.	10 .
Թրամվէյ	
Բըբօր	11 . բարա
Դրամագեղջ	18— 0/0
Փոխնկգր. իլնտ եռմս	110 1/2
Բարիզ	23— 40

Բարիզ 11 նոյեմ.	
Գաղղ. Արժ. 3 0/0	56 . 90
Իտալ	53 . 60
Օսմ.	45 . 35
Փոխառ	—
Փոխ. 1869ի . [.]	283 . 75

Վիէննա 11 նոյեմ.	
Բումէլի Արժ. հին . . Տլ.	53 .
Նոր	—
Քրէտի Օսթրո-թիւրք	29 . —
Օսթրո-Օթօման Պանք	54 . —
Պէիօ	109 . 70
Փոխնկգր. իլնտ եռմս	115 .

Լոնտրա 10 նոյեմ.	
Անգղ. Արժ.	92 9/16
Օսմ. . բաց	43 7/8
գոց	44 3/4
Փոխ. 1869ի	53 3/8
" 1871ի	— . —
Պանք Օթօման	12 3/4

ԾԱԽՈՒ ԳԵՏԻՆ

Պէշիքթաշ Եէնը-Մահալլէ Օիւլամուր ճատտէսի, 1400 կանգուն գետին մը կայ ծախու գոհացուցիչ պայմանով, գնողաց դիւրութիւն ըլլալու համար, գետինը, որոյ երեք կողմն ալ լայն պողոտայ կը գտնուի, տիրոջը կողմանէ չորս հաւասար մասերու բաժնուած է, այնպէս որ ուղողը յիշեալ գետինի մէկ

քաղաքի մասը միայն, կամ կէսը և կամ ամբողջը միանգամայն եթէ ուզէ կրնայ ծախու առնել :

Աւելի մանրամասն տեղեկութիւն առնել ուզողներն պէտք են դիմել Պէշիկթաշի նաւամատոյցին վրայ գրտնուող վերի յարկի Գ. Մարտիկի Սըրճարանը :

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Ի Կ. Պօլիս Պահճէ-Գափու Մեծ Մաքսատան դէմը Թիւ-13

Մեծ Շահ 600,000 Ֆրանք

Մերձակայ Լատինական դեկտմբեր 1ին քաղաքիք Բուսէլիի Երկաթուղեաց Արժէթղթոց վիճակահանութեան Բաղդատոմսերը Բրոյէս կը ծախուին մեր Դրամատունը շահաւոր պայմանօք :

Վերոյիշեալ Բաղդատոմսերէն կը գտնուին նաև Գատը-Քէօյի նաւամատոյցի շիտակ ճանքան Երաւագառ Մըկըրտիչ աղային խոնուածը :

Թէ Թուրքիոյ և թէ օտար տէրութեանց ամեն տեսակ Արժէթղթոց փոխանակութիւնք կըլլան մեր Դրամատան մէջ, նոյնպէս նաև անոնց կտրոնները կը զեղչուին գոհացուցիչ կերպիւ :

Սաքսօնիոյ վիճակահանութեան 85 երրորդ չըջանին համար բուն տոմսակներէն կը ծախուին մեր Դրամատան մէջ, որոն տոմսակներէն նաև 100 բաժինէ բաղկացեալ Բաժնեթղթեր արտադրած եմք, որուն բաժանորդ ըլլալ ուզողը մէկ Օսմ. լիրա միայն վըճարելով կրնայ շարունակ մասնակից ըլլալ հինգ անգամ քաղաքիք վիճակահանութեանց մէջ մեծագումար պարգևներ շահող գումարներուն : Ասոնց մերձակայ վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ 1873 Լատինական դեկտ. 16ին :

Տէմիրգափուկեան և Չօպանեան Ընկ.

ԵՐԿԱՆԵԱՆ ՄԱՂԱՋԱՍԸ

ԱՏԱՄՊՈՒ ՔԵՕՐԻԻ ՔԱՐՇՈՒՍԸ

ԵՆՆԻ-ՃԱՄԻ ՔԱՐՇՈՒՍՈՒ ԵՕ. 75

1873 Աւաքանկա դեկտ. 1 եանի Բուսի նոյեմբեր 19ընտա 23 իւնիս տէֆա օլարադ Չարպխանէի Ամիրէտէ քուրրասը քէշիտէ օլունաճագ Բուսէի տէմիր եօլու սէնէտաթընըն հիսէի իքրամիէ պիլէթլէրի պէհէրի 5 շըշ. սաթըլըր Ստանպօլ Բէօքրիւ քարչէօք Եէնի-Ճամի գարուսու Եօմ. 75 մաղա. զատա :

Չիքր օլունան հիսսէի իքրամիէ պիլէթլէրիտէն 50. 100. 500 վէ տահա զիյատէ իտէյէն օլուր իսէ մըքտարընա կէօրէ Ֆիլիթթճա իգրամ օլունաճաղը իլան օլուններ :

Քէզալիք Սաքսօնեանըն 85 ինճի թէրթիպաթընըն պիլէթլէրի իլէ Պուքրէշ, Միլան վէ Բուսէի տէմիր եօլու վէ սայիր Էվրօքա պիլէթլէրի բիացա Ֆիլիթթը իլէ սաթըլըր վէ ճիւզի պիր Ֆէրք իլէ սաթըն արընըր :

20 հոկտ. 1873

Ա.ՁԴ

Ազգային Հիւանդանոցի մօմարանէն ելած թէ հասարակ և թէ հարսանեաց և ին հանդէսներու համար ծաղկազարդ փայլուն և գեղեցիկ մօմեր, կը ծախուին Չաքմաքճըլար եօքուչու Մեծ Նոր խան Միջնայարկ թիւ 49 Հիւանդանոցի դըրասենեկին մէջ, հորկ եղած ատեն ամեն ոք կրնայ ամեն ատեն իրեն ուզած ձևով և դիրքով մեղրամոմ գըրտնել հոն արժան գնով :

Սարգիս Մ. Հիսարլեան

Ա.ՁԴ

Սամաթիոյ Սահ. վարժարանէն նոր ելած պարկեշտ երիտասարդ մը կը փափաքի վաճառականութեան ծառայել. սա տոմարակալութիւն գիտնալէն զատ գիտէ նաև անգլիերէն և գաղղիերէն, ըստ բաւականին ունի նաև մաքուր գիր : Ուստի այսպիսի գրագրի մը պէտք ունեցողը կրնայ լրագրոյս գրասենեակը դիմել :

ԳՈՒՄԱՆՏԱՐԻԱ

Կիպրոսի այս ազնիւ և սննդարար գինին որ մարմին ու արիւն զօրացնելու և ստամոքսի ուժ տալու համար շատ անգամ փորձուած և մեծ օգուտներ տեսնուած է, 3 էն միջև 20 տարեկան և Անդերիանուպօլսյ ազնիւ և մաքուր 2 էն միջև 10 տարեկան գին/ներ, և ուրիշ քանի մը տեսակ զուտ և մաքուր գինիներ, և պատուական օղիներ են, որ ամեն առնող շատ գոհ պիտի ըլլայ զմրած շիշէներով կը ծախուի չափաւոր գիներով Կ. Պօլիս Թահմիզ փողոց թիւ 9 մաղազան : Օ. Ք. սոյն մարգայով չը դմրուածներն երաշխաւորեալ չեն :

ԵՐԿՐԱԳՈՒՆՏ

Հայ գրերով վիէննայէ բերել տըրուած յիշեալ նշանաւոր մեծ գունտը որ Պօլսոյ հրապարակին վրայ ոչ թէ հայերէն այլ գաղղիերէն և գերմաներէնը անգամ չի կայ. երեկ Ֆրէնկեան գըրատունը մտաւ, որոն մեծութիւնը տեսնելու արժանի է :

Կըսուի թէ յիշեալ գունտը 1/4 մէճիտ բաժինով իր բոլոր թիւերն ալ վաստկող վիճակահանութեան գրուելով՝ Ա. անգամ իլլող թուոյն, պիտի տրուի, որմէ ետք շահող դիւերուն պիտի տրուին թափառական հրեայ, մծութէքրիսթօ, Հայկ դիւցազն, պատկերազարդ խորենացի և ին. և ին.

ՆՈՐ ՎԻՃՈՎԱՀԱՆ

Ե Ի

ԵՐԱՋԱՀԱՆ ԸՍՏ ԲՆՈՒԹԵԱՆ

Սոյն գրքին Ա. հատորը արդէն հըրատարակուած և ընդհանրութիւ գըտած ըլլալով, այս անգամ պարտաւոր

րեցանք երկրորդ հատորն ալ մաքուր տպագրութեամբ 'ի լոյս ընծայել, որով կամբողջանայ բաղդի թուանշանները, և կը ծախուի տմեն Հայ գրավաճառաց քով, և կամուրջի գլխու պարագան : Գին է շըշ :

Ա.ՁԴ

ՀԱՅԵԼԻ

Վ.Ա.Ր.Ո.Ի.Ց

Ե Ի

ՅԱՌԱՋԻՄՈՒԹԵԱՆ

Հայագէտ Մեծ. Չօլաքեան էֆէնտիի հեղինակած այդ գրքոյկը՝ շաբաթական օրագրութիւն մ'է՝ ուր տղայոց աւանդուելիք դասերուն առջև շաբաթականի վերածեալ վեց սիւնակ կայ, որոց մէջ տղուն ամենօրեայ վիճակը թէ ծնողք տղուն տան մէջի և դաստիարակք վարժարանի մէջի վիճակը պարտին նօթեգրել :

Գրքոյկն ամբողջ 46 շաբաթականի վերածեալ և կը ծախուի 50 փարայ ամեն գրավաճառաց քով :

Այս Հայեղին կարժէ որ վարժարանացմէջ ընդունուին 'ի դիւրութիւն տըղայոց օրագրութեանը :

ԻԼԱՆ

Ինսանա արիզ օլան սըղը իլլէթի սօղուքտան հասըլ օլմաղ իսէ տէ պուքէմիք իշիտէ ֆէնուզ պիր սարը սուտան իպարէթ օլուպ ֆագաթ պուլունուպազըսը վագթը կէշիշ վէ լայըզըլա թէմէլ թուլմուշ վէ պազըսը էթ իլէ քէմիք արասընտա քալմըշ աղըրյա պաշգաճա մալիւճէ օլունմաք վէ հըֆսըյա Ալլահ թաալեանուղուլ իլլէթինտէն վէ մէրագտան միւնաղատան արիզ օլան եէլտէն պաշգա եալընըղ սօղուգտան հասըլ օլան սօղուղ օն սէնէլիք տախի օլատաա՝ եինէ չարէսի պուլունմաք վէ էօքսիւրիկէ վէ կէօքիւս թըքանըկընա պէլ կէվէկիլի վէ մագաթթա բէյտահ օլան սըղըլը մայասըլա մալիւճէ վէրմէք իւզրէ սարըլըքտա քէսրի մէշուր Ուստա Սիմօն պուլունուր Մահմուտ-Փաշա ճամիսինին ալլուսունտա օրթատաքի գահվէտէ իքթիզա էտէնէրին գահվէի մէզքիւրա կէվէլէրի վէ իճապընա կէօրէ թարիֆ վէ էտփիէսինի պագմագ իչուն պունտան ագտէմ իլան էթմիշ իսէ տէ մէզքիւր իլլէթլէրին իլավէսի իշիւն պուքէրէ եինէ իլան իտէր :

Վէ սըղը իլլէթի 24 սաաթտա տըշարը չըգարըրըմ վէ գասըգ իլլէթիին իճրասընտա պուլունուրըղ :

Քառնընտա պասուր օլան պիլ սանճը վէրի իսէ օնունտա իճրասընտա պուլունուրըղ :

ՏԵՐ ԵՒ ՊԱՏԱՍԻՍԱՆՍՈՒ

ՕԳՍԵՆ ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆԻ Օ. ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ

ԵՈՒՍՈՒՓԵԱՆ ԽԱՆ

ՎԵՐԻ ՅԱՐԿ ԹԻԻ 7